



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. առաջին եռամսյակում /վերլուծություն/

2007թ. առաջին եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 30731 գործարքներ, որոնց քանակը 2006թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 5.3%-ով, իսկ 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 10.5%-ով:

2007թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 12925 օտարման գործարքների 88.2% կազմել են առուվաճառքները, 11.3%՝ նվիրատվությունները և 0.5%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 29.4% արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 33.5% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2007թ. առաջին եռամսյակում, 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 13.2%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 24.0%-ով:

2007թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 68.1% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 27.3%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 5.7%-ով:

2007թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

<i>Համայնքներ</i>	<i>Միջին գները /դրամ/</i>		
	<i>առաջին եռամսյակ 2006թ.</i>	<i>առաջին եռամսյակ 2007թ.</i>	<i>չորրորդ եռամսյակ 2006թ.</i>
Կենտրոն	358200	417700	400700
Արաբկիր	278100	326200	319600
Քանաքեռ-Զեյթուն	169600	232600	213700
Նոր-Նորք	158900	207000	187800
Ավան	140700	192400	177500
Էրեբունի	137900	205600	187100
Շենգավիթ	171500	217500	200000
Դավթաշեն	175300	226200	208500
Աջափնյակ	159900	205500	189900
Մալաթիա-Սեբաստիա	156100	194000	179800
Նուբարաշեն	99100	118000	115900
<i>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</i>	<i>182300</i>	<i>231200</i>	<i>216400</i>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. առաջին եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 6.8%:

2007թ. առաջին եռամսյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2007թ. առաջին եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1429 բնակարաններ, որոնց քանակը 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 9.1%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 15.9%-ով:

2007թ. առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		ստաջին եռամսյակ 2006թ.	ստաջին եռամսյակ 2007թ.	չորրորդ եռամսյակ 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	54400	90600	80100
	Ապարան	24200	28300	27100
	Թալին	23000	32700	29100
Արարատ	Արտաշատ	42400	71600	63400
	Մասիս	52900	80600	73600
	Վեդի	36300	53400	49800
	Արարատ	38300	52600	49800
Արմավիր	Վաղարշապատ	76500	112000	102100
	Արմավիր	47500	79600	70400
	Մեծամոր	30300	51400	46100
Գեղարքունիք	Սևան	32300	52500	46900
	Գավառ	23400	31900	30200
	Մարտունի	37100	46500	42500
	Վարդենիս	19600	25200	23400
	Ճամբարակ	11600	14100	13900
Լոռի	Վանաձոր	43300	64000	59000
	Ստեփանավան	23100	31900	28700
	Սպիտակ	28400	42300	40300
	Ալավերդի	19000	23400	22900
	Տաշիր	19900	22500	21900
	Թումանյան	5200	5400	5400
	Շամլուղ	2800	3000	3000
	Ախթալա	10300	11200	10900
Կոտայք	Աբովյան	83400	128700	118200
	Նոր Հաճն	58000	89000	80400
	Բյուրեղավան	38900	62000	57700
	Եղվարդ	52500	80000	73100
	Հրազդան	34400	44900	42500
	Ծաղկաձոր	65000	81900	80600
	Չարենցավան	37400	52800	50800
Շիրակ	Գյումրի	45400	60900	57500
	Արթիկ	27000	40800	37500
	Մարալիկ	21700	24000	23400
Սյունիք	Գորիս	47700	62800	56700
	Կապան	37100	57500	54900
	Միսիան	29700	48800	46900
	Մեղրի	24200	35500	34700
	Ագարակ	18300	23100	22300
	Քաջարան	22400	29700	29200
	Դաստակերտ	6400	6800	6800
Վայոց Ձոր	Վայք	31200	54000	51100
	Եղեգնաձոր	47200	63600	63400
	Ջերմուկ	54900	94600	82200
Տավուշ	Դիլիջան	37000	59400	56500
	Իջևան	45500	77700	69300
	Բերդ	26800	33000	31600
	Նոյեմբերյան	14700	26500	24900
	Այրում	18000	18000	18000

2007թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 7.8%:

2007թ. առաջին եռամսյակում հանրապետությունում բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2007թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1444 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 265, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1179: 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 6.8%-ով, ընդ որում Երևանում՝ 19.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 3.2%-ով: 2006թ. առաջին եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 14.6%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 2.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 19.3%-ով:

2007թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

<i>Համայնքներ</i>	<i>Միջին գները</i>		
	<i>առաջին եռամսյակ 2006թ.</i>	<i>առաջին եռամսյակ 2007թ.</i>	<i>չորրորդ եռամսյակ 2006թ.</i>
Կենտրոն	366200	424300	402800
Արաբկիր	288400	337600	322000
Քանաքեռ-Զեյթուն	172300	237700	215600
Նորք-Մարաշ	184600	210600	194500
Ավան	145100	195500	179800
Էրեբունի	142800	210100	188800
Շենգավիթ	174700	220200	201600
Դավթաշեն	177900	231500	210300
Աջափնյակ	162800	208500	191900
Մալաթիա-Մեքաստիա	159200	196800	181800
Նուբարաշեն	101500	120800	117800
<i>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</i>	<i>188700</i>	<i>235800</i>	<i>218800</i>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. առաջին եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 7.8 %:

2007թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2007թ. առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական

գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին եռամսյակ 2006թ.	առաջին եռամսյակ 2007թ.	չորրորդ եռամսյակ 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	55900	93600	81400
	Ապարան	25700	30700	28300
	Թալին	24300	35000	30100
Արարատ	Արտաշատ	43900	73900	65000
	Մասիս	54000	84600	74800
	Վեդի	37300	56500	51300
	Արարատ	39400	55200	51200
Արմավիր	Վաղարշապատ	77600	114900	103400
	Արմավիր	48600	82200	71500
Գեղարքունիք	Սևան	38200	54800	48200
	Գավառ	24700	34200	31600
	Մարտունի	38600	49300	43700
	Վարդենիս	21500	28500	24800
	Ճամբարակ	13300	16300	15000
Լոռի	Վանաձոր	44700	67200	60700
	Ստեփանավան	26800	35200	30000
	Սպիտակ	30200	45600	41600
	Ալավերդի	20500	26000	24200
	Տաշիր	21400	24700	23200
	Թումանյան	6900	7400	7200
	Շամլուղ	4300	4900	4600
	Ախթալա	11900	13000	12500
Կոտայք	Աբովյան	85500	133200	119600
	Նոր Հաճն	59300	92200	81800
	Բյուրեղավան	40100	64800	58800
	Եղվարդ	53400	84400	74400
	Հրազդան	35500	47700	43700
	Ծաղկաձոր	65800	93500	85100
	Չարենցավան	38700	55400	52000
Շիրակ	Գյումրի	47400	64000	58800
	Արթիկ	28500	43100	38700
	Սարալիկ	23500	26400	24800
Սյունիք	Գորիս	49200	65600	58000
	Կապան	37900	60700	56200
	Սիսիան	30900	51200	48400
	Մեղրի	25600	38100	36200
	Ագարակ	20400	25500	23600
	Դաստակերտ	8700	9100	8900
Վայոց Ձոր	Վայք	32800	57200	52500
	Եղեգնաձոր	48400	66900	65000
	Ջերմուկ	33300	44500	40600
Տավուշ	Դիլիջան	37800	62000	57600
	Իջևան	45900	80700	70400
	Բերդ	27800	35300	32700

	Նոյեմբերյան	15700	28300	26100
	Այրում	19200	19200	19200

2007թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. չորրորդ եռամսյակի համեմետ աճել են 10.4%:

2007թ. առաջին եռամսյակում հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

Ընդհանուր առմամբ, 2007թ. առաջին եռամսյակում հանրապետությունում օտարվել են 5563 միավոր /4258.96 հա/ հողեր, որից Երևանում` 299 միավոր /37.92 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 234 միավոր /34.07 հա/ հողեր, որից Երևանում` 108 միավոր /13.63 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 2765 միավոր /3867.75 հա/, որից Երևանում` 8 միավոր /0.60 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 1743 միավոր /170.46 հա/, որից Երևանում` 168 միավոր /16.10 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 958 միավոր /175.27 հա/, որից Երևանում` 114 միավոր /16.46 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 60 միավոր /13.69 հա/, որից Երևանում` 9 միավոր, /4.76 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր` 26 միավոր /29.77 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր` 11 միավոր /2.02 հա/ ընդհանուր մակերեսով:

2007թ. առաջին եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 5259 միավորի /4116.54 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում` 283 միավոր /36.11 հա/, նվիրատվության գործարքներ` 278 միավորի /136.60 հա/, որից Երևանում` 11 միավոր /1.42 հա/ և փոխանակության գործարքներ` 26 միավորի /5.82 հա/, որից Երևանում` 5 միավոր /0.39 հա/:

Հանրապետությունում 2007թ. առաջին եռամսյակում, 2006թ. առաջին եռամսյակի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 47.1%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 45.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ` 60.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել` 59.2%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում` 1512.82 հա, որից 1494.19 հա` գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 44.1% կամ 2319 գործարքներ /1868.36 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում` 123 գործարքներ /17.06 հա/, իսկ 55.8% կամ 2933 միավորը /2238.17 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում` 158 միավոր /19.05 հա/: 2007թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 7 գործարք /10.01 հա/:

Ստորև ներկայացվում է 2007թ. առաջին եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի

առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունիքի վաճառքը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Չեռական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	9	4.76	40	3.92	74	8.38	6	0.33	0	0.00	116	11.00	36	7.72
Արագածոտն	160	339.10	3	1.13	14	1.77	43	1.27	185	259.72	0	0.00	105	10.08	3	0.17
Արարատ	125	146.18	12	1.93	282	28.08	115	3.57	349	182.19	3	0.24	204	19.90	11	0.38
Արմավիր	172	486.66	10	1.64	2	0.14	42	1.30	287	1007.53	0	0.00	147	14.53	17	1.01
Գեղարքունիք	37	38.31	3	0.30	10	4.73	91	5.03	85	72.34	0	0.00	51	5.84	5	1.22
Լոռի	68	73.32	2	0.06	4	0.21	83	7.12	203	118.11	0	0.00	30	3.77	12	0.76
Կոտայք	171	327.02	4	0.52	77	7.98	123	26.60	403	303.52	0	0.00	320	29.20	22	9.66
Շիրակ	15	12.26	3	0.41	79	3.83	55	2.87	63	74.15	0	0.00	28	2.89	4	0.06
Սյունիք	11	30.57	2	0.38	0	0.00	34	1.94	32	30.77	1	0.16	5	0.52	8	0.54
Վայոց Ձոր	54	178.48	0	0.00	12	0.53	93	73.78	26	17.87	0	0.00	15	1.69	4	0.17
Տավուշ	27	4.51	5	1.85	63	4.68	60	11.75	107	44.01	1	0.05	26	2.46	7	1.34
Ընդամենը	840	1636.41	53	12.98	583	55.87	813	143.61	1746	2110.54	5	0.45	1047	101.88	129	23.03

Ստորև ներկայացվում է 2007թ. առաջին եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Ուղղակի վաճառք</i>								<i>Աճուրդ վաճառք</i>									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	77	12.08	9	4.76	14	0.95	54	6.37	46	4.98	0	0.00	0	0.00	26	2.97	20	2.01
Արագածոտն	4	0.24	2	0.23	0	0.00	2	0.01	216	343.03	160	339.10	1	0.90	14	1.77	41	1.26
Արարատ	20	0.45	0	0.00	1	0.12	19	0.33	514	179.30	125	146.18	12	1.93	281	27.95	96	3.24
Արմավիր	15	1.22	3	1.16	0	0.00	12	0.06	209	488.31	170	486.45	7	0.48	2	0.14	30	1.24
Գեղարքունիք	14	7.40	3	0.30	2	4.01	9	3.09	127	40.98	37	38.31	0	0.00	8	0.73	82	1.94
Լոռի	5	0.02	0	0.00	0	0.00	5	0.02	152	80.69	68	73.32	2	0.06	4	0.21	78	7.10
Կոտայք	26	2.54	2	0.28	6	1.55	18	0.71	348	359.48	170	326.92	2	0.24	71	6.43	105	25.89
Շիրակ	3	0.02	0	0.00	0	0.00	3	0.02	149	19.35	15	12.26	3	0.41	79	3.83	52	2.85
Սյունիք	7	1.00	2	0.38	0	0.00	5	0.62	40	31.89	11	30.57	0	0.00	0	0.00	29	1.32

Վայոց Ձոր	13	2.05	0	0.00	0	0.00	13	2.05	146	250.74	54	178.48	0	0.00	12	0.53	80	71.73
Տավուշ	27	2.24	5	1.85	2	0.05	20	0.34	128	20.56	27	4.51	0	0.00	61	4.64	40	11.41
Ընդամենը	211	29.26	26	8.96	25	6.68	160	13.62	2075	1819.31	837	1636.10	27	4.02	558	49.20	653	129.99

Հանրապետությունում 2007թ. առաջին եռամսյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 3 գործարքներ /0.31 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2007թ. առաջին եռամսյակում, 2006թ. առաջին եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 2.7 անգամ: Ընդ որում Երևանում մնացել է անփոփոխ, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 2.8 անգամ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 2.2 անգամ, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 2.1 անգամ, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 6.1 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 2.3 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. առաջին եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Եվազգու յն	Առավելագու ռոյն	Միջին			Եվազգու յն	Առավելագու ռոյն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	145	273.54	34.4	3000.0	453.0	110	49.42	362.2	6772.5	2460.3
Ապարան						10	6.78	90.6	767.6	356.2
Թալին	15	65.57	33.9	106.3	55.7	55	192.94	90.6	758.5	357.2
Ծաղկահովիտ						2	2.23	77.0	948.2	164.2
Արարատի մարզ										
Արտաշատ	52	54.44	36.4	2676.2	1751.8	130	57.53	335.1	5418.0	1335.9
Մասիս	28	30.05	32.0	1676.0	602.1	53	44.57	181.1	6772.5	1713.0
Վեդի	45	61.68	32.9	3057.6	1328.1	161	78.94	203.8	4515.0	1127.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	57	156.05	15.1	1537.9	235.8	80	85.02	294.3	4063.5	852.4
Բաղրամյան	47	95.65	33.8	622.1	82.6	66	819.72	90.6	677.3	535.0
Վաղարշապատ	66	234.75	26.9	1411.2	371.6	130	93.02	443.7	9030.0	1424.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	12	13.31	232.4	233.4	233.1	54	41.21	190.2	496.7	351.6
Ճամբարակ	3	0.30	144.0	144.0	144.0	6	1.68	45.3	541.8	143.2
Մարտունի						10	1.81	45.3	1806.0	463.1
Սևան						2	2.47	45.3	451.5	189.6
Վարդենիս	22	25.61	184.2	495.0	288.7	13	25.17	27.2	532.8	231.5
Լոռու մարզ										
Ալավերդի	65	68.22	210.0	1002.7	322.9	146	79.94	163.0	2483.3	1001.8
Գուգարք						14	6.22	226.4	2709.0	908.9
Սպիտակ	1	2.00	130.0	130.0	130.0	5	5.56	226.4	1490.0	500.1
Ստեփանավան	1	0.50	2112.0	2112.0	2112.0	11	13.89	90.6	2257.5	352.9
Տաշիր	1	2.60	740.0	740.0	740.0	22	8.67	45.3	451.5	197.8
Կոտայքի մարզ										

Աբովյան	44	52.91	34.6	1145.0	391.7	153	77.57	271.7	11287.5	3101.7
Եղվարդ	83	198.41	34.6	8010.0	577.7	207	129.99	172.1	11287.5	2187.0
Հրազդան	43	75.59	54.8	1762.5	266.1	40	95.36	113.2	2709.0	841.6
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	3.50	142.0	142.0	142.0	36	35.61	249.0	1693.1	433.4
Ամասիա						4	14.86	36.2	237.0	107.1
Անի	9	8.21	77.2	1736.2	291.8	15	12.64	108.7	361.2	222.2
Աշոցք						7	9.78	45.3	112.9	113.4
Արթիկ	4	0.56	300.0	420.0	345.0	1	1.26	63.4	1083.6	164.5
Սյունիքի մարզ										
Գորիս						5	14.58	90.6	673.3	331.0
Կապան	10	30.37	183.6	2904.0	679.6	2	0.21	54.3	841.6	219.7
Մեղրի	1	0.20	1000.0	1000.0	1000.0	12	2.06	181.1	1784.2	442.7
Սիսիան						13	13.92	45.3	631.2	213.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	28	121.62	32.8	635.0	148.5	22	15.87	117.7	2524.8	1252.5
Վայք	26	56.86	19.6	587.9	115.5	3	1.83	54.3	1430.7	493.5
Տավուշի մարզ										
Բերդ						44	15.57	45.3	841.6	340.7
Իջևան	24	3.69	440.2	1260.0	799.1	3	0.52	240.0	1683.2	784.5
Նոյեմբերյան	3	0.82	318.8	2655.0	1732.7	60	27.92	45.3	3509.5	488.9

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. առաջին եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	12	13984.0	112.7	2520.0	721.4	92	82366.0	113.2	3612.0	2206.8
Ապարան						6	7640.0	113.2	632.1	183.9
Թային	2	3703.0	116.6	116.6	116.6	7	10795.0	45.3	361.2	87.7
Ծաղկահովիտ								45.3	361.2	67.3
Արարատի մարզ										
Արտաշատ	166	173499.0	146.0	1056.0	348.3	46	50340.0	135.8	2709.0	853.2
Մասիս	61	50069.0	631.5	1623.4	869.6	105	89374.0	135.8	9030.0	1074.9
Վեդի	54	55975.0	173.7	414.8	280.5	51	52457.0	113.2	993.3	624.8
Արմավիրի մարզ										
Արմավիր						56	62157.8	135.8	2257.5	1011.2
Բաղրամյան						3	3700.0	81.5	270.9	122.9
Վաղարշապատ	2	1440.0	294.0	294.0	294.0	88	79450.0	135.8	4515.0	1373.7
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	54.0	1296.3	1296.3	1296.3	6	4573.0	135.8	903.0	338.5

Ճամբարակ						4	3803.0	45.3	135.5	92.7
Մարտունի	4	4800.0	58.3	66.7	62.5	23	28461.0	90.6	451.5	213.0
Սևան	1	400.0	410.1	410.1	410.1	11	11292.3	90.6	903.0	135.1
Վարդենիս	2	2000.0	175.0	175.0	175.0	7	10262.0	45.3	225.8	97.7
Լոռու մարզ										
Ալավերդի						12	18070.0	67.9	270.9	117.2
Գուգարք						7	6632.0	67.9	2347.8	519.1
Սպիտակ	3	1800.0	284.0	528.0	374.6	5	6060.0	63.4	451.5	115.6
Ստեփանավան	1	341.0	114.4	114.4	114.4	4	5610.0	45.3	270.9	94.1
Տաշիր						1	750.0	45.3	135.5	67.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	33	31721.0	413.3	2420.9	1965.1	160	145305.6	135.8	6772.5	1651.6
Եղվարդ	24	19200.0	1481.3	1481.3	1481.3	139	128108.0	135.8	6772.5	1786.7
Հրազդան	14	13375.0	121.1	656.0	199.7	18	16510.0	135.8	9030.0	1157.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	45	11842.0	473.7	17467.1	13441.6	20	16844.0	113.2	1535.1	312.5
Ամասիա								45.3	135.5	68.5
Անի	1	2543.0	115.4	115.4	115.4	2	3494.0	67.9	180.6	93.7
Աշոցք								40.8	135.5	56.8
Արթիկ	33	23870.0	28.8	429.8	147.1	6	8570.0	67.9	925.6	149.5
Սյունիքի մարզ										
Գորիս						3	2344.0	67.9	541.8	223.6
Կապան								67.9	632.1	193.6
Մեղրի						1	1580.0	67.9	406.4	109.2
Սիսիան						1	1250.0	67.9	406.4	131.3
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	11	4580.0	121.0	1150.0	574.8	14	15780.0	67.9	1128.8	259.7
Վայք	1	700.0	447.9	447.9	447.9	1	1160.0	77.0	632.1	110.8
Տավուշի մարզ										
Բերդ								45.3	632.1	82.5
Իջևան	61	46356.0	1430.0	2300.0	1687.5	19	16374.0	67.9	1354.5	371.6
Նոյեմբերյան						6	8100.0	45.3	632.1	120.0

2007թ. առաջին եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 10 գործարքներ 2.53 հա ընդհանուր մակերեսով, ընդ որում 4՝ Գեղարքունիքի /0.20 հա/, 3՝ Լովա /0.19 հա/ և 1-ական՝ Արարատի /0.10 հա/, Շիրակի /1.84 հա/ և Սյունիքի /0.20 հա/ մարզերում:

2007թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2278 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.4%: Ընդ որում, վարձակալության գործարքների 48.6% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2007թ. առաջին եռամսյակում 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 2.9%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 21.2%-ով:

2007թ. առաջին եռամսյակում վարձակալության գործարքների քանակական փոփոխության շարժն ունի աճի միտում:

2007թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 207 բնակարանների, 93 անհատական բնակելի տների, 816 հասարակական, 106 արտադրական նշանակության օբյեկտների, 1041 միավոր /16957.89 հա/ հողերի և 15 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկելված են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 63 վարձակալության գործարքների, այդ թվում 50 միավոր /0.46 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 55.0%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 23.2%-ով:

2007թ. առաջին եռամսյակում հանրապետությունում վարձակալված 16957.89 հա հողերից 8.62 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 16949.28 հա հողերի 44.04 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 15.28 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 13272.27 հա, որից 1069.21 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 2433.90 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. առաջին եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	139	185.17
Արարատ	7	320.00	68	123.98
Արմավիր	0	0.00	11	84.46
Գեղարքունիք	24	1077.60	39	78.05
Լոռի	2	270.00	235	922.01
Կոտայք	4	180.00	32	54.83
Շիրակ	0	0.00	63	152.86
Սյունիք	6	586.30	44	482.91
Վայոց Ձոր	0	0.00	10	7.82
Տավուշ	0	0.00	10	14.77
Ընդամենը	43	2433.90	651	2106.86

2007թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4301 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 14.0%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 1.2%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 79.4%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /47.5%/, առանձնատների /25.4%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.0%/ և հողերի /10.3%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1677 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 12.0%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 38.1%-ով:

2007թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 960.82 հա հողեր, որից 39.61 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 94.9% կամ 911.97 հա,

գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 617.14 հա, որից 616.75 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2007թ. առաջին եռամսյակում գրավադրման գործարքների քանակական փոփոխության շարժն ունի աճի միտում:

2007թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 13 և 6 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 66.1%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 83.9%-ով: 2007թ. առաջին եռամսյակում մասնավորեցման գործարքների բարձր տոկոսաչափն արձանագրվել է Սյունիքի՝ 26.3 %, իսկ ցածրը՝ Կոտայքի, Շիրակի և Վայոց Ձորի մարզերում՝ 5.3-ական%:

2007թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 4997 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 9.1%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 4.7%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.3%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /36.9%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն